Հաստատված է
Առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2023 թվականի նոյեմբերի 24-ի N 15-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳԻՐ

Երևան 2023

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	-	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	-	Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	-	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԱԱՏՄ	-	Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ՌԳՍՊՎՎ	-	Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն
ԻԱՓՎ	-	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻԽՀՏԱԲ	-	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԴՇՎՎ	-	Դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն
ԲՕՍՎՎ	-	Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության վարչություն
ՀՍՀՎՎ	-	Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն
ԱՕՎՎ		Աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչություն
ՏԿ		Տարածքային կենտրոն

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործում է ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 755-Լ որոշման համաձայն:

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում գործունեություն է ծավալում ավելի քան 145000 տնտեսավարող սուբյեկտ: Հաշվի առնելով, որ Տեսչական մարմինն ստեղծվել է 2017 թվականին, վերջնականապես ձևավորվել է, և իր

գործունեությունը կանոնակարգող օրենսդրական հիմնական փաթեթը հաստատվել է 2018 թվականի կեսերին, իսկ ստուգումների գործընթացը մեկնարկել է միայն 2020 թվականի կեսերին, այդ կարճ ժամանակահատվածում դեռևս չի հաջողվել տնտեսավարող սուբյեկտների նշանակալի հատվածին ներգրավել Տեսչական մարմնի վերահսկողության ծածկույթում:

Խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 16-Լ որոշմամբ հաստատվել է 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը, որով նախատեսվել էր իրականացնել 800 ստուգում (712 տնտեսավարող սուբյեկտների մոտ), որոնցից՝ 656 բարձր ռիսկայնությամբ, 104 միջին ռիսկայնությամբ և 40 ցածր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների մոտ:

2023 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում հրապարակվել են տարեկան պլանավորված 712 տնտեսավարող սուբյեկտից 623 ստուգման հանձնարարագրերը: Միաժամանակ իրականացվել է 274 ըստ անհրաժեշտության ստուգում:





Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում ստուգումներին զուգահեռ իրականացվել են նաև վարչական վարույթներ:

2023 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում իրականացվել է 3064 վարչական վարույթ:



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Ընթացիկ տարում մի շարք աշխատանքներ են տարվել օրենսդրական դաշտի կարգավորման և բարելավման ուղղությամբ:

Լրամշակվել և Գրասենյակ է ներկայացվել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1124-Ն որոշումը:

Լրամշակվել են Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների մի շարք ստուգաթերթեր՝ համապատասխանեցնելով գործող նորմատիվ իրավական ակտերին, միաժամանակ՝ վերացնելով վերահսկողության արդյունքում արձանագրված օրենսդրական բացերը: Այսպես.

- ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի N 426-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտի NN 1.17, 1.19 և 1.22 ստուգաթերթերում:

- ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 981-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված դեղերի շրջանառության NN 2.1, 2.2 և 2.3 ստուգաթերթերում,

- ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 981-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ է շարադրվել բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի 16 ստուգաթերթ (NN 3.1-3.16):

Լրամշակման և հաստատման փուլում են գտնվում ևս մի շարք ստուգաթերթեր:

Առաջարկություններ են ներկայացվել Գրասենյակին՝ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտները կանոնակարգող մի շարք օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նպատակով, այդ թվում՝

1) «Դեղերի մասին» ՀՀ օրենք,

2) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրք,

3) ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշում,

4) ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշում և այլն:

Միաժամանակ, առաջարկություններ են ներկայացվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված օրենսդրական փոփոխությունների և լրացումների մի շարք նախագծերի վերաբերյալ:

ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից տարբեր ոլորտներում և տարբեր ընթացակարգերով իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու ընթացքում առաջանում են մի շարք խնդիրներ լիազորությունների՝ օրենքով սահմանված չլինելու պատճառով կամ մի շարք օրենքներում ոչ միանշանակ և տարընթերցում առաջացնող դրույթների սահմանման հետևանքով, մասնավորապես՝

1) դեղերի շրջանառության և հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ոլորտներում մինչև վարչական վարույթը որոշ առանձնահատկություններով պայմանավորված դիտարկման և դրա արդյունքում գնահատման բացակայությունը,

2) էլեկտրոնային առողջապահության համակարգին հասանելիություն չունենալը խոչընդոտում է ամբողջ ծավալով տվյալ ոլորտի վերահսկողության իրականացմանը,

3) վերահսկողության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված ըստ անհրաժեշտության ստուգումների իրականացման դեպքերի բացակայությունը,

4) համապատասխան պետական մարմիններից գաղտնիք պարունակող (տնտեսավարող սուբյեկտին վերաբերող) տեղեկությունների ձեռք բերման սահմանափակումը:

Նշված խնդիրներից խուսափելու, օրենսդրական դաշտը կարգավորելու և Տեսչական մարմնի կողմից իր վերահսկողական գործառույթները լիարժեք իրականացնելու նպատակով կարևորվում է «Առողջապահության և աշխատանքի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով կկարգավորվեն առողջապահության և աշխատանքի պետական վերահսկողության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, պետական վերահսկողություն իրականացնող անձանց իրավունքները, պարտականությունները և

պատասխանատվությունը, ինչպես նաև պետական վերահսկողության հետ կապված այլ հարաբերություններ:

Միաժամանակ, առկա են գործառույթների իրականացման ընթացքում բացահայտված այլ խնդիրներ.

1) «Նյութական պահուստի մասին» ՀՀ օրենքում փոփոխության անհրաժեշտություն՝ ռազմավարական պաշարների պահուստ ունենալու պարտավորություն ունեցողների ցանկում բացառությունների բացակայություն,

2) դեղերի շրջանառության ոլորտում որակի անհամապատասխանության հիմքով արտադրանքի շրջանառության դադարեցման և հետկանչի պահանջի բացակայություն,

3) դեղերի հետկանչի ընթացակարգերի կատարելագործման անհրաժեշտություն, ինչպես նաև՝ շրջանառությունից հանված դեղերի ոչնչացման հետ կապված հարաբերությունների կարգավորում,

4) ԵԱՏՄ-ից դեղ ներմուծելիս դեղերի տեղափոխում անմիջապես պահեստ, դրանից հետո միայն համապատասխան գործընթացների իրականացում՝ ներմուծման թույլտվություն, լաբորատոր նմուշառում և այլն,

5) խմելու ջրամատակարարման մի շարք համակարգերը շահագործող կազմակերպությունների բացակայություն,

6) ավագ և միջին բուժաշխատողներին պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթերի տրամադրման համար պատասխանատուի բացակայություն,

7) վերահսկողության ոլորտների մի շարք նորմատիվ իրավական ակտերի և ստուգաթերթերի լրամշակման, ինչպես նաև՝ նոր ստուգաթերթերի մշակման անհրաժեշտություն,

8) վարչարարություն իրականացնելիս ծանուցումների հետ կապված խնդիրներ,

9) Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ոլորտում արձանագրված կարևոր խնդիրներից է

այն հանգամանքը, որ շինարարություն իրականացնող տնտեսավորող սուբյեկտների կողմից հիմնական աշխատանքները (այդ թվում լիցենզավորում պահանջող) ծառայությունների մատուցման պայմանագրերով հանձնարարվում են ֆիզիկական անձանց, այդ թվում՝ արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման աշխատանքներ կատարողների հետ, ինչը լրացուցիչ ռիսկեր է առաջացնում արտադրական վտանգավոր օբյեկտի անվտանգ շահագործման, աշխատանքի անվտանգության ապահովման համար, ինչը հանդիսանում է նախապայման դժբախտ դեպքերի համար:

Վերոգրյալից բացի, վերահսկողության ոլորտներում նկատելի է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ոչ բավարար մակարդակը, նկատի ունենալով նաև նոր տնտեսավարող սուբյեկտներ տնտեսական դաշտ մտնելը, որի բարձրացման նպատակով կարևորվում է բոլոր ոլորտներում իրազեկման աշխատանքների իրականացումը՝ առաջնահերթությունը տալով մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի բարձր աստիճան ունեցող խախտումների վերաբերյալ իրազեկումներին:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Հավելված N 1

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2023 թվականի նոյեմբերի –ի N --- որոշման

Միջոցառումներ
Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	«Առողջապահության և աշխատանքի պետական վերահսկողության մասին» օրենքի նախնական նախագծային տարբերակի ներկայացում Գրասենյակ	Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական լիազորությունների հստակեցում և առանձնահատկությունների սահմանում օրենքով, նոր գործիքակազմերի ներդնում	ԻԱՓՎ	2-րդ եռամսյակ
2	ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշմամբ հաստատված «Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրության, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության բնագավառի վերահսկողության» (ՏԳՏԴ ծածկագիր C21)՝ N 2.2 ստուգաթերթի 3-րդ կետում փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ	Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ընթացքում ի հայտ եկած խնդրի շտկման և վերահսկողության լիարժեք իրականացում: Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի արտադրության համար «Պատշաճ արտադրական գործունեության» հավաստագրի առկայության պահանջի ստուգում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

3	«ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ	ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման 3-րդ հավելվածի 43.1-րդ կետում ՇՄՋ հավաստագրի ներկայացման վերաբերյալ պահանջի սահմանում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	1-ին եռամսյակ
4	««Նյութական պահուստի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի առաջարկի ներկայացում Գրասենյակ	Ռազմավարական պաշարների պահուստ հանդիսացող դեղերի և բժշկական նշանակության գույքի ներմուծում իրականացող պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բացառության նախատեսում, որը հնարավորություն կտա վերջիններիս չընդգրկել ռազմավարական պաշարների պահուստ պահելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների ցանկում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	1-ին եռամսյակ
5	«ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 164 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Գրասենյակ	Կյանքի և առողջության համար վտանգ ներկայացնող դեղերի հետկանչի արդյունավետ և ժամանակին իրականացում	ԴՇՎՎ ԻԱՓՎ ՏԿ	3-րդ եռամսյակ
6	Բժշկական օգնության և սպասարկման ոլորտների վերահսկողության գործող ստուգաթերթերի լրամշակում և նախագծերի ներկայացում Գրասենյակ	գործող ստուգաթերթերի համապատասխանեցում լրամշակված իրավական ակտերի պահանջներին	ԲՕՍՎՎ	1-ին եռամսյակ
7	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում՝ լրացումներ	Ավագ և միջին բուժաշխատողներին պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթերի տրամադրման համար պատասխանատուի	ԲՕՍՎՎ ԻԱՓՎ	1-ին եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	կատարելու մասին նախագծերի առաջարկի ներկայացում Գրասենյակ:	նշանակում, իսկ չտրամադրելու դեպքում՝ պատասխանատվության միջոցի սահմանում		
8	Լիազոր մարմնի հետ քննարկումների կազմակերպում՝ բժշկական օգնության և սպասարկման վերահսկողության ոլորտի ստուգումների ու վարչական վարույթների ժամանակ ի հայտ եկած խնդիրների շուրջ և իրավական ակտերում փոփոխություններ կատարելու, նոր իրավական ակտեր ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում (ՀՀ կառավարության 29.06.2002թ. N 867 որոշում և այլն)	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	ԲՕՍՎՎ	4-րդ եռամսյակ
9	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառի ստուգաթերթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկի ներկայացում Գրասենյակ 1. Ստուգաթերթ N 1.2 2. Ստուգաթերթ N 1.3 3. Ստուգաթերթ N 1.5 4. Ստուգաթերթ N 1.8 5. Ստուգաթերթ N 1.12 6. Ստուգաթերթ N 1.15 7. Ստուգաթերթ N 1.17	ՀՀ-ում ռիսկի վրա հիմնված ստուգումների ընթացքում լիարժեք վերահսկողության իրականացում	ՀՍՀՎՎ	1-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
(374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

10	Խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում շահագրգիռ մարմիններին	Խմելու ջրամատակարարման բոլոր համակարգերի շահագործման ապահովում, ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների կանխարգելում	ՀՍՀՎՎ	1-ին եռամսյակ
11	«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջների վերահսկողություն» ստուգաթերթի նախագծի մշակման վերաբերյալ առաջարկության ներկայացում Գրասենյակ	ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 46-Ն հրամանով հաստատված «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջներ» ՍԿ N 3.1.1-002-23 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պահանջների նկատմամբ վերահսկողության ապահովում	ՀՍՀՎՎ	3-րդ եռամսյակ
12	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն որոշման հիման վրա ստուգաթերթի նախագծի մշակում և ներկայացում Գրասենյակ	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	ՀՍՀՎՎ	3-րդ եռամսյակ
13	Շինարարության ոլորտում աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության համակարգային խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների դեպքում՝ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ	Տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում Շինարարական աշխատանքներ կատարող անձանց կյանքի և առողջության նկատմամբ վերահսկողություն և կանխարգելում Շինարարության ոլորտում տեղի ունեցող դժբախտ դեպքերի քանակի նվազեցում	ԱՕՎՎ ԻԱՓՎ	1-ին եռամսյակ

Հավելված N 2

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիր

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Կատարող (համակատարող) ստորաբաժանում	Ժամկետ
1	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացման, դուրսգրման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների իրականացում	«Դեղերի մասին» ՀՀ օրենքով, ենթաօրենսդրական իրավական ակտով սահմանված դեղատոմսերի լրացման, դուրսգրման, բաց թողնման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ԴՇՎՎ ԻԽՀՏԱԲ	2-րդ եռամսյակ
2	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտի հետ առնչվող տնտեսվարող սուբյեկտների համար բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին իրազեկում	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, վերահսկողության ոլորտում արձանագրվող խախտումների կանխում ու նվազեցում	ՀՍՀՎՎ ԻԽՀՏԱԲ	3-րդ եռամսյակ
3	Գործատուների հանրապետական միության, արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության հետ համատեղ սեմինարների կազմակերպում	Գործատուների կողմից ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերի կիրարկման արդյունավետության բարձրացում,	ԱՕՎՎ	1-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

		աշխատողների իրազեկվածության բարձրացում		
4	Մարդկանց թրաֆիքինգի աշխատանքային շահագործման, ներառյալ երեխաների թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր աշխատանքի վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում	ՀՀ-ում 2023-2025 թթ. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացում	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	3-րդ եռամսյակ
5	Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով	Թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում, այդ թվում մինչև 18 տարեկան անձանց	ԱՕՎՎ ԻԽՀՏԱԲ	1-4-րդ եռամսյակ
6	ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող վերահսկողության, ստուգումների մեկնարկի, վերահսկողության շրջանակում կիրառվող ստուգաթերթերի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի մասին իրազեկում	Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում տնտեսավարողների և հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ
7	Բնակչության շրջանում ԱԱՏՄ-ի գործառույթների և կատարվող աշխատանքների մասին իրազեկում	Իրազեկման նյութի պատրաստման, ՁԼՄ-ների հետ համագործակցությամբ հոդվածների և տեսանյութերի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու	ԻԽՀՏԱԲ	1-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

		արդյունքում տնտեսավարողների և հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում		
8	Նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքի ամփոփ տվյալների՝ այդ թվում իրականացված վերահսկողության, ստացված դիմում բողոքների, հարցումների, ստացված զանգերի ներկայացում և տրամադրում ՁԼՄ-ներին	Հաշվետվությունների, իրազեկման նյութերի պատրաստման և հրապարակման միջոցով տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովում	ԻԽՀՏԱԲ	1-ին եռամսյակ
9	ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում հրապարակումների միջոցով ոլորտային՝ նշանակալի և տոնական օրերի հանրային իրազեկում	Ոլորտային նշանակալի և տոնական օրերի իրազեկման միջոցով ԱԱՏՄ-ի, վերահսկողության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և հասարակության շրջանում գործընկերային միջավայրի ապահովում*	ԻԽՀՏԱԲ	Ըստ օրացուցային օրերի
10	Յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում առնվազն մեկ անգամ իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության և տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում	«Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի թվաքանակի, բովանդակության պարբերաբար ամփոփում, վերլուծություն, հաշվետվությունների կազմում	ԻԽՀՏԱԲ	1-4-րդ եռամսյակ
11	Ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, վարսավիրանոցների, գեղեցկության և	Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոններ սահմանող նորմատիվ իրավական ակտերի	ԻԽՀՏԱԲ ՀՍՀՎՎ ՏԿ-ներ	1-2-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

	խնամքի ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների համար իրազեկման սեմինարի կամակերպում	և դրանց պահպանման կարևորության ներկայացման, իրազեկման սեմինարների լուսաբանման միջոցով՝ հիվանդությունների տարածման կանխարգելում	ԻԱՓՎ	
12	Սեզոնային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ իրազեկում	Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության և տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում, հիգիենիկ գիտելիքների տրամադրում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում	ԻԽՀՏԱԲ ՀՍՀՎՎ	3-4-րդ եռամսյակ
13	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների համար իրազեկման սեմինարի կազմակերպում	Փաստաթղթաշրջանառության՝ սահմանված կարգին համապատասխան վարման և բուժաշխատողների համար շարունակական մասնագիտական կրեդիտների ապահովման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկման սեմինարի անցկացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով նմանօրինակ խախտումների կանխարգելում	ԻԽՀՏԱԲ ԲՕՍՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ	1-2-րդ եռամսյակ
14	Դեղերի առցանց շրջանառության վտանգների և ռիսկերի վերաբերյալ իրազեկման նյութի պատրաստում	Իրազեկման նյութի պատրաստման, դրանք ԱԱՏՄ պաշտոնական կայքի և սոցիալական հարթակների միջոցով տարածելու արդյունքում հանրության շրջանում իրազեկվածության բարձրացում,	ԻԽՀՏԱԲ ԴՇՎՎ	3-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
թեժ գիծ 8107 www.hlib.am

15	Դեղատնային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում դեղատնային գործունեություն իրականացնող անձնակազմի համար իրազեկման սեմինարի կազմակերպում	Դեղատոմսով բաց թողնվող դեղերի, դեղատոմսերին ներակայացվող սահմանված ձևի և ոլորտին վերաբերվող այլ կարգավորումների ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով նմանօրինակ խախտումների կանխարգելում*	ԻԽՀՏԱԲ ԴՇՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ	3-4-րդ եռամսյակ
16	Գործատուների (նրանց ներկայացուցիչների) և աշխատողների (նրանց ներկայացուցիչների) համար ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների, ոլորտը կարգավորող իրավական ակտերի և աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ իրազեկման սեմինարի կազմակերպում	Աշխատանքային օրենսդրության պահանջների, գործատուներին և աշխատողներին իրենց իրավունքների ու պարտականությունների ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման միջոցով խախտումների կանխարգելում,	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ	3-4-րդ եռամսյակ
17	Շինարարություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների համար և աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ընթացքում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ իրազեկման սեմինարի կազմակերպում	Շինարարությունում անվտանգության կանոնների ներկայացման, դրանց խստագույնս պահպանման անհրաժեշտության ծայրահեղ կարևորության, աշխատողների նախնական և պարբերական բժշկական զննության ապահովման անհրաժեշտության ներկայացման, իրազեկման սեմինարի լուսաբանման	ԻԽՀՏԱԲ ԱՕՎՎ ՏԿ-ներ ԻԱՓՎ	3-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am

		միջոցով խախտումների և շինարարությունում դժբախտ դեպքերի կանխարգելում		
18	ԱԱՏՄ վերահսկողական գործառույթների ընթացքում կիրառվող իրավական ակտերի և ստուգաթերթերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների շրջանում իրազեկում	Նոր հաստատված կամ ուժի մեջ մտած ստուգաթերթերի և նորմատիվ իրավական ակտերի ԱԱՏՄ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում հրապարակման միջոցով վերահսկողական գործառույթների առավել արդյունավետ և թափանցիկ իրականացում, տնտեսավարողների շրջանում իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՏԱԲ Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ	1-4-րդ եռամսյակ
19	ԱԱՏՄ, պետական գերատեսչությունների, ՔՀԿ-ների և գործընկեր կազմակերպությունների միջև համագործակցության շրջանակներում միջոցառումների կազմակերպում	Միջոցառումների կազմակերպում, կազմակերպված միջոցառումներին ԱԱՏՄ ներկայության ապահովում, լուսաբանում, ԱԱՏՄ ճանաչելիության բարձրացում	ԻԽՀՏԱԲ	1-4-րդ եռամսյակ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
Թեժ գիծ 8107 www.hlib.am